բելու մեծ պատիւը կը շնորհէք: Այսպիսի հանգամանքում և նրա տպաւորութեան տակ հեշտ է խոսել, մանաւանդ թէ ոչքան քաղցր է:

Ահա թէ ինչ մտքով ամրապնդած, ես համարձակվում եմ խնդրել ձեզանից, որ դուք տեղափոխվիք այստեղից Երևան, երևակայութեամբ միայն: Նորա համար, որ այդ դէնից մենք պէտք է մըտնենք այն աշխարհը, որ ես մի քանի ամիս առաջ ճանապարհորդել եմ:

Ցոյս ունիմ, ուր ոչ ոք չի զղջալ այդ տեղափոխութեան համար: Երևանը մի շատ գեղեցիկ երկիր է. նորա բնակիչները եթէ վատ էլ դնահատեն, բայց եկաւորների համար անկարելի է չչիանալ նորա նկարչական տեսարանի վերայ և չը սիրաշարվել:

Ամեն օր արշալոյսի հետ ես շրջում էի դէմքս դէպի սարերը, Մասիս, որոյ գագաթի յաւիտենական սառոյցը, դեռ արեգակի ծագումը ոչ ոքին չը յայտնված, շողշողում է նորա անդրանիկ ճառագայթների տակ, որին հեռաբնակ ազգայինները, աւելի շատ, գիտնական օտարները ամեն կողմից տեսութեան են գալիս:

Դա տիեզերքի համար չին Կոտակարանի սարն է: Ամենի սիրեզրը նորա բարձրութեանն է համնում. Մեզ համար՝ աւերակների կեդրոն, խոնարհած թագաւորութիւնների յանգուն վկան է:

Այդ հսկայական լեռը, արարատեան դաշտի հա-